ռւսերին: Արլունը ծորում եր կրոնավորի արտերից—  
բամբուկն առանց շեղվելու անընդհատ բարձրանում եր  
ու իշխում:

Քիչ հետո կրօնավորին դուրս տարան անզգա վի-  
ճակում:

Դինդիպն աչքի տակով սարսափած դիտում եր:

Խումբը լարում եր ուժերը, աշխատելով վերցնել  
ամենաբարձր նոտան, նվագախումբն ալլեա չեր շառաչում  
և դմբդբացնում, ալլ վառնում եր: Ապա աննկարգը լի:

ուժդնութեան համնող մի տղաղակ բարձրացնելով, լեռ-  
դողներն ու նվազողները լոեցին:

Աղօթքը վերջացավ:

Սակայն Դինդիպը լերեկվա նման չափսոսեց դրա  
համար, ընդհակառակը, նա թեթևութլուն դդաց, լերը  
ժամերգութլունը վերջացավ:

ՇԱՄԱՊԻ ՀԵՏ ԲԱՐԵԿԱՄԱՆԱԼԸ, ՏԻԲԵԹԱԿԱՆ  
ԳՐԱԴԻՏՈՒԹՅԱՆ ՍՈՎԱՐԵԼԸ

Կարվածատիրոջ արտաավալըներից Դինդիպը միշտ  
կարող եր տեսնել իր հովիտը՝ իրենց վրանընեռու չերւ  
նա, կարծես, չեր ել հեռացել հալլընի ճանապարհներից,  
քանի վար միշտ իր առաջ տեսնում եր սարերի և կուր-  
զանների ծանոթ գծագրութլունը և հեռվում սկսվող  
անապատի շերտը նա հանդիպում եր ծանոթ տղաների  
և ծերունիների:

Մառակելով կալվածատիրոջ մոտ, նա համենալն զեսու,  
չեր բաժանվել այն հողից, վորի վրա ապրում ելին նըս  
հալլն ու մալլը:

Նա ուզեց անեսնել դաշտը,

Նա մասեցավ ցանկապատին:

Դաշտի այն կողմից գալիս եր Դուրզուն—Խոտոկի քառ  
մին: Նա անգուսպ ցանկութլուն ուներ գոնե մի անգամ  
նաւելուայն ճանապարհը, վորով հալլընրան բերեց, —դու-  
ցե դրանով սիրու մի քիչ բացվի:

Ժամասացութլունից հետո Լաման քնած եր, Շա-  
րապը նիրհում եր խրճթի մոտ: Աշնանալին արելը տա-  
քացնում եր նրան: Խուվարակն առաջվա նման հեռու  
լեր պահում իրեն՝ ոտար և լերկչոտ:

Ճանկապատի զարպասաւմ Դինդիպը կանգ առավ:  
Նա տեսավ ըլրակները, ճանապարհը և ավաղի կուրաերը:

Թեթև քամի լեր փշում: Թռչում եր մի թաշուն:

Սակայն, հաղիվ Դինդիպը դարպասից վուաքը գուրս  
դըեց, լեռը զզաց, վոր մեկը բռնեց իր խալաթից:

Նրա լեռն կանգնած եր Շարապը,

Շարապը շնչաց միշտ ներքն նալելով:

— Լաման հրամալում ե լետ դառնալ:

Շարապն, բատ լեռնութին, ամաչում եր, բալց և  
անպես աշխատում եր բալց շթողնել Դինդիպին: Նա  
անվատան ըռնում եր Դինդիպի թներից և բայց թողնում,  
լեռը Դինդիպը նալում եր նրան: Նա գնում եր Դինդի-  
պի լեռեից և մամանակ առ ժամանակ հրում եր նրան:

— Գնա, գնա, — մրթմրթում եր Շարապը, — ուսու-  
ցիչն սպասում ե քեզ:

Կրոնավորը նրանց հանդիպեց շեմքում, կատաղու-  
թլունից ուռած գեմքով: Սարսափելի լեռ նրա հանգիսա-  
ձարնը, Դինդիպը զլուխն, ուսերի մեջ քաշած սպասում  
եր պատժին:

— Դու սկսում ես վաս ծառալել աստծուն, — ար-  
տասանեց վանականը:

Նա ուժով քաշեց Դինդիպին դեպի իրեն և կաղա-  
պարի նման նրա գլուխը պինդ սեղմեց իր ծնկերի արան-  
ցում: Վոչ ճիշը, վոչ աղաչանքը — չոգնեցին: Հետ քաշե-  
լով Դինդիպի վեշերը, վանականը սկսեց փոկով մորա-  
կել նրան:

Դինդիպին ծեծելուց հետ, վանականը նրան թողեց  
առանց ճաշի, բալց աշխատանքից չագատեց — նրան  
սպասում ելին ջրի գուլլերն ու ցախ ջարդելը:

Դեռ մի քանի որ հետո ել Դինդիպը ժամանակ առ  
ժամանակ կծկվում եր հանկարծակի ցավից: Խոչ վոր  
պատճառով ալլև տաճար չելին գնում: Ակավեց տիրե-  
թական անհասկանալի աղոթքների անգիր անելը:

Տղաներին իր առաջ նստեցնելով, լաման իր տերությունալով, անընդհատ շրխկացնում եր նրանց գլխին, կարծես վաղջաւում եր նրանց, Սակայն շուտով տերությունան փոխվեց պինդ, չիբուխի նման մի փայտիւ

Դասը տեսում եր լերկու, լերկու և կես ժամե Ալդժամանակամիջոցում հազիվ կարողանում ելին հաղթահարել տիբեթական խոշոր տառերի մի եջ, Յերբեմն լաման քնում եր. Արթնանալով, նա նորից վերադառնում եր կարդացածին:

— Աա — զարխալ — զախա... իսո — գողոն — գոխա... ասդ — վեռուր — վեռող... ուս — տոդ վեսուտար, — մելամադնու լերկարացնում եր նա առղը առղի լեանից, իսկ տղաները աշխատում ելին ընդորինակել նրա արտասանությունը:

Ամենաշնչին անփաթության համար նրանք փաւախ հարված ելին ստանում: Կրոնավորն աշխատում եր լսիկը միշտ միևնուն աեղին: Առանձնաբես բաժին եր համար Դինգիպին: Նրա զադաթին ուսուցք եր դուացել:

Իր աղոթքներում Դինգիպը հաճախ եր աղերսում Բուղդալին՝ իրեն պաշտպանել լամալից: Լենց վոր լամալի քունը տանում եր, Դինգիպն աղոթքի հետ միասին խորամանկ և միամիա շշնջում եր — ռախովես արա, վոր լաման ինձ չծեծիւ:

Շարապն ավելի քիչ եր պատժվում: Բալց մի անգամ, մի քանի հարված ստանալուց հետո, Դինգիպը մի անբարլացակամ հալացը նետեց իր հասակակցի վրա և աեսագ, վոր Շարապի խաղաղ աշքերում արցունքներ են փալլում:

Վաստ սնվելու պատճառով Դինգիպի մարմնի վրալի վերքերը բացվեցին և սկսեց արլուն հստել նրանցից:

Զուր կրելիս կամ ոջախի համար տոպրակով աթար քերելիս Դինդիպն ամեն մի շարժումից ցավ եր զգում։ Նա քալում եր վոտքերն իրարից հեռու պահելով, ըզեղի նման պատվում եր իր տեղում և լերբեմն ել չեր կարողանում մի քայլ անել, Վերջապես) նա կատաղած պառկեց փորի վրա։

— Ի՞նչ պատահեց քեզ, — հարցրեց Շարապը փաղաք-շորեն և լերկշու։

— Ցես չեմ կարողանում ման գալ, արլուն ե դալիս և շատ ե ցավում։

— Ցուց տուր, — ասաց խուվարակը, բարձրացնելով նրա խալաթը, Հարկավոր և բժշկեր, Թուլլ տուր ասպար քսեմ։

Շարապն անմիջապես սպեզանի պատրաստեց՝ խառնելով թրիքը ջրի հետ և քանից արլունոտ վերքերին։

Տղաները լամակի մասին չելին խոսում, Բալց Դինդիպը հասկանում եր, վոր մեծ եր Շարապի ատելությունը զեպի իրենց ուսուցիչը։ Դինդիպին բուժելու ընթացքում խուվարակը լերկուղով նախում եր խրճիթի կողմը։

Նա չթողեց, վոր Դինդիպը տանի լեփ-լեցուն գուլ-յերը իր գուլլերը տանելուց հետո, նա վերադառնում եր ու տանում Դինդիպինը. ալդպիսով նա գուլլերը հասցըրեց զըսեթե մինչև խրճիթը։

Դինդիպն սկզբում զժողովությամբ եր ընդունում մոնթի սպնությունը Խեթ և կասկածոտ հետեւում եր նըան, ինչպես զասերի ժամանակ։

Այն հանգամանքը, վոր առաջին որերին Շարապը խուսափում եր նրա մաերմաթյունից, Դինդիպին տրամադրել եր Շարապի զեմ։ Սովորելու մեջ Շարապի ցուց տված

խոշոր առաջդիմութիւնը նույնպես թշնամանական զգացմունք եր առաջացնում Դինդիպի մեջ:

Բայց, զիտելով դուլերի ծանրութեան տակ կռացած նրա թուրակաղն մարմինը, Դինդիպին ակամա ժպատաց: Եարադի կարեկցութեանը գեպի իր դժբախտութեանը մի տաք զգացմունք եր առաջացնում նրա մեջ:

Դինդիպին մնում եր դուլերը ներս տանել խրճիթ: Բայց նույնիսկ ալդոեղ նա դուլերը դրեթե կիսով շափ թափթիեց: Բարերախտաբար լաման քնած եր:

Աւսպես սկսվեց Շարապի և Դինդիպի բարեկամութեանը:

Նորից բեռնակրութեան գնալիս, ճանապարհին նրանք մտերմորեն զրուցեցին և պարզվեց, վոր Շարապն առաջին տարին չե զացանում: Յերբորդ աշունն եր, վոր նա հովորում եր ալնաեղ:

Նա մի տարով փոքր եր Դինդիպից, բազց իրբև ընտանիքի մեծ տղան, նրա գլխով շատ բաներ ելին անցել:

Նա ել Դինդիպի պես բատրակ եր լեղեր, Նա ել եր անեցել մի սիրելի շուն, գիշերել եր դաշտում հովիվների հետ, փախցրել եր գալլերին, սլացել եր ձիու վրա նստած: Նրա հովառում կա մի լիճ:

Դացան մտնելուց հետո Շարապն ալես իր հովտում չեր լեղեր Արդեն լերորդ տարին ե, վոր նա չի տեսել իր հավորի վոչ շներին, վոչ ալծերին, վոչ ձիերին, վոչ ել տղաներին: Միայն լերբեմն նա հանդիպում եր հորը, վորը նվերներ եր բերում դացան:

Առեն ինչ ալնպես եր, ինչպես Դինդիպի համար, և Դինդիպը պիտի կրե ալն բոլորը, ինչ վոր կրել եր Շարապը վանքում անցկացրած տարիներին:

Ամեն ինչ այնպես եր, ինչպէս Դինդիսի համար,  
բայց Շարապը շատ բան չգիտեր, ինչ վոր արդեն զի-  
տեր Դինդիսը—նըս հովիտը, վոր ավելի հեռու լեր,  
Դուրսուն—Խոտոկը, ժողովրդական բանակալիները զիս  
շելին մտել:

## ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՄԵՌԻՆ ԱՆՑԱՎ; ԳԱՐՆԱՆ ՏՈՆԸ

Նրանից հետո կյանքն ավելի ուրախ եր անցնում։  
Ազատ ժամերին տղաները թագուն զրուցում ելին  
անցւալի ձասին։ Նարապի լերկչոտութլունը լերևի նրա-  
նով եր բացատրվում, վոր նա շատ վաղ եր հեռացել իր  
հոգակից, ժամանակ շունենալով բավականաշափ ամրապլնդ-  
վել զիշերալին հասախմբերում, ձիերին ինամելիս և իր  
հասակակիցների հետ վեճի բանվելիս։ Նա զեռ նոր եր  
սովորել ձի նստել, կավել գալլերի զեմ, զեռ նոր եր  
զիպել նրան անապատի քամու շունչը, լերը ստիպված  
լեղավ իր հովվական կյանքը փոխել վանքի մոալ կյան-  
քի հետ։

Կանքի մերկու տարվա մոնթութլունն իսպաս վոշն-  
չացրել եր նրա տղալական աշխոտութլունը, համարձա-  
կութլունը և հետաքրքրութլունը։

Թաժան ձմեռ եր,

Սոսկալի շոր ցըտերից գետինը ճաքճքել եր, Հով-  
տում, վանքի շուրջը սղիտակ ուղտերի նման կուտակ-  
վել ելին ձրւնի հրումերը, վոր ըուքը բերել եր սարալան-  
ջերից։ Զորակներից, սարերից, քամին սըբում եր ձրւնը  
տեղտեղ մերկացնելով զետինը։

Մարդիկ փաթաթվում ելին մոըթիների մեջ։

Տղաների ուսուցիչն ավելի և ավելի լեռ շատ քնում, փարտից փորագրում՝ բաւրխաններ — բուդդալական աստվածիկներ, հարվածում մոնթերին, իսկ նըանք եւ, թեև լսում, բայց քիչ բան ելին հասկանում, Վառում ելին վառարանը ու լեռեմն վոչխար ու զել խաղում, վոր նշանակում եւ հազնել վոչխարի մորթի, բուրդը զեղի դուրս, հաջել զալլի նման և հարձակվել իրար վրա Բայց արդ խաղն ալնքան ել լերկար չեր զրագեցնում նրանց:

Ջրանը գալիս եր, քամին սրբում եր այն, բայց քանի գնում որեւը լերկարում ելին:

Դարնանը տղաներին ընդունեցին նվազախումբ:

Նրանց թմրուկներ տվին, Շարապն տսաց, վոր մատենում եւ մեծ տոնը — տամանորդա ժամանացութլունը: Շարապը զարկում եր փոքրիկ ու կիսակլոր թմրուկը, վոր նման եր մեջտեղից կիսած սեխի:

Արդ արվեստում նա հաղթում եր Դինդիպին, վորին հանձնել ելին մի մեծ ամրամբան թմրուկ:

Այստեղ ևս լաման, թմրկահարների ուսուցիչը, հաճախ հարվածում եր Դինդիպին, ինչպես աղոթքների ժամանակ Մերաւնին խփում եր թմրկափալտով:

Շարապն ավելի հեշտութամբ եր ըմբռնում լեղանակները և աղոթքների տակող, մինչդեռ Դինդիպի համար արդ բոլորը հնչում եր միատեսակ:

Սակայն արժմ Շարապի հաջողութլունը Դինդիպին դուք եր դալիս:

— Դու ինձանից լավ ես նվազում, — ուրախ ժպտալով, ասում նա իր բարեկամին: Դու զոչազ ես Ցեթեմի ունենալինք, դու ձիավոր կղառնալիք:

Շարապը ժպտում եր հեղութլամբ:

Տղաները բավականին առաջադիմություն ելին ցուց  
ապահով թմբկահարության արվեստում։ Աղոթքների տոնը  
մատենում եր։

Շարապը բոլորամբին վհասավել եր և նախազգուշաց-  
նում եր ընկերոջը մոտեցող տոների գժվարությաննե-  
րի մասին։ Նրանց սպասում ելին տասն անքուն որեր,  
լարված ծիսակատարության և կիսաքաղց դրության տաս  
լերկար ու ձիգ որեր։

Սակայն Դինդիպը հետաքըքըրությամբ սպասում եր  
տոնին, հուսալով, վոր ինքը իարող ե դիմանար

Վանքն որեցոր կենդանանում եր։

Աևեն կաղմից հավաքվում ելին ուխտավորները։

Զիերով, սպլեքով, ուղտերով—նրանք գալիս ելին  
որ ու գիշեր։

Դաշտերում, լայն տարածության վրա, լովում եր  
ձիերի խրխինչ, ուղտերի աղմուկն ու սալերի ճռնչոցը։  
Նրանց անիվները,—վոր կաղմված ելին լերկու խաշաձե  
ամբացած փալտերից և ալդ փալտերի վրա ձգված ողա-  
կապերից, որորվում ելին և ալս ու ալն կողմ ծամավում։  
Թվում եր, թե նրանց տակ ճշում ու ճռնչում ելին քա-  
րերն ու ավազը, վոր քշում, տանում եր քամին։ Փաշին  
դանդաղ սողում եր ձիավորների խմբի լեռնից։

Սալերի վրա կամ ձիերով զալիս ելին վառ խալաթ-  
ներով և ըրդոտ գդակներով վաճառականներ ու անաս-  
նապահներ՝ վոշխարներն առաջներն արած։ Շատ պճնա-  
մոլներ, նույն ձեի խալաթներ հաղած և զոտիներ կա-  
պած, հպարտանում ելին լեվրովական ձեի ֆեարի գըլ-  
խարկներով։ Գլխարկների վրա խրում ելին գուլնզգուկն  
փետու ըներ և պարծենկոտ ման գալիս։

Իսկ մի քանիսի գլուխների զազաթներին հազիվ

ելին մնում փետուրով և փնջով զարդարված տիրուկաները պարաբռամարմին մանգովները հագել ելին տաքալալաթներ, ածիլած գլուխներին դրել փոքրիկ զգակներ,

Զքավորները վոչխարի փոխարեն տանում ելին գառներ կամ աղվեսի մորթի:

Աղոթքի թմբուկներն ամբողջ որը պատվում ելին:

Աւխտավորները բռնեցին ամբողջ տարածությունը պատից դուրս իջավալրում զիշեր ու ցերեկ ալբում եր աղմուկ և աղաղակ: Նոր լեկոզները վիճում ելին տեղի և ջրի համար:

Հանապարհները և իջավալը ծածկվեցին թարմ թրիքներով, նեխվող բանջարեղենով և խոտի մնացորդներով: Սալլերի լծափալտերը ցցված ելին դեպի վեր:

Դինդիպը լերբեք շեր տեսել արդախի ամբոխ և խարտարդետություն:

Եեկան ահա և ոտար լամաներ: Դրանք շատ հպարատ ելին պահում իրենց, հագել ելին նոր խալաթներ և ուսերին զցել ճոխ արխիմիխներ<sup>1</sup>: Թալլում ելին ու դիտում ամեն ինչ:

Ուրախությամբ զիանելով ամեն մի նորություն, Դինդիպը զիշերներն ականջ եր զնում իջավալը աղմուկին, իսկ առավոտը վաղ վեր կենուամ ու նալում ամբոխին՝ հուլունենալով հանդիպել Զորս ջրհորների հովտից վորեն մեկին:

Անսառունների հոտը նրան հիշեցնուամ եր իր հովիտը: Վանքում ափառ կենդանությունն իսկապես տոնական: Արամադրություն եր առաջացնուամ նըա մեջ:

Շարապը տանջվում եր:

1 Ա. Ի ի մ ի ի—դորեղածքի մի շերտ, վանական լինելու մի նշան:

— Ո՞ւ, դու չես իմանում, — ասում եր նա, — թե ինչպես  
դժվար ե դա: Անցած գարնանը շորս խուվարակ մեռավ  
տաճարում...

Այսպես թե ալնպես, ժամասացությունն սկսվեց. — Ցա-  
զան Սարան գարնան սպիտակ ամիսն եր: Լուսաբացին  
հնչեց զանգը: Նա վոռնում եր, սակայն նրա ձայնն աժ-  
դին չեր — արժու իջավալքի աղմուկը լերբեմն ծածկում եր  
այս, վաղուց արդեն որորված նամփաներավ նորից ձըդ-  
վեցին վանականները և մանթերը, իջավալրից շարժվեցին  
ուխտավորները: Աղաղակները դադարեցին, Դինդիալը,  
Շարապը և լաման առաջ ելին շարժվում փսփսացող լուս  
ամրոխի միջով, վորից փշում եր քրտինքի հոս:

Տզաները ծալապատիկ նստեցին թմբուկի մոտ, Մար-  
դիկ խառնվում ելին շորս կողմ ու հրահըում իրար: Առա-  
ջին շարքերում, ինտ ու առաջ որորվելով նստել ելին  
ծերերը, ձեռքերը թէքերի մեջ կոխած:

Նվագախոսմբը պատրաստվեց: Ալժո նվազին մա-  
սակցում եր Գանգինը — մարդկային վոլոգոսկրը: Ալդ  
հազվագլուք գործիքի վրա նվազող խիստ հպարտա-  
նում եր:

Երջանի մեջ մտավ ավագ լաման — նա, վոր հետեւում  
եր կարգապահությանը: Նրա ձեռքում կար առաջնից  
ավելի լերկար մի ճիպոտ, վորը փալում եր բամբուկի  
թարմությունը:

Դինդիալը գոհունակությամբ նկատեց, վոր ինքը  
ծերունուց պաշտպանված ե աղոթքների շարքերով:

Ժամանացության կարգի մեջ վոչ մի փոփոխություն  
չեր նկատվում — լերզեցողություն և նվագախումբ, վօրոնք  
շարունակ փսխարինում ելին միմլանց, կամ նվագախումբը  
և ձաւները միախառնվում: Ալրում ելին հոտավեա խո-  
տաբույսեր: Աղոթքողները դանդաղ լերզում ելին քթում,

աղոթքի խոսքեր մրմնջում և որորվում, աշքերը գետնին-հառած։

### ԲԱՄԲՈՒԿԻԿ, ԲԱՄԲՈՒԿԻԿ, ԲԱՄԲՈՒԿԻԿ

Մինչև ճաշ ժամանակն արագ անցավ, Ամեն մեկնիր հետ ուստելիք եր բերեր, զոր և կերալ, առանց աեղիս վեր կենալու Ժամասացությունը չեր դադարում։ Դիշերված դեմ Դինդիան ուժառպառ լեղավ։ Ականջներում աղմուկ եր տիրում իր իսկ թմրուկի ձախնից, Վոտները նվառ ելին։ Ա՛խ ինչպես քննել եր սազում։

Մոնթերն ու լամաները հերթով փոխարինում ելին երար.

— Դու ել գնա—մըթմբթաց ուսուցիչը։

Նարապը մնաց, Նա մնում եր մինչև լուսաբաց, լերը պիտի վերադառնալին նրանք, ովքեր զնացել ելին հանգստանալու։

Ժամասացությունը չեր դադարում, Դինդիան իր լեռակից արդեն լսում եր պղնձիտ ափսեների զրնգոցը, զոր կոչվում ե ցանդ, լերգեցողություն և թմբկահարություն ձախները։ Աղոթողների հոգնած զեմքերին ման ելին դաշիս ճանճերը, վորոնք տաքությունից կենդանացել ելին։

Հասնելով վերջապես մուտքին, Դինդիապը թեթևությունը շունչ քաշեց, Դիշերը զով եր և խաղադ։

Ամեն ինչ լսվ եր, միան Նարապի դրությունն անհանգստացնում եր Դինդիապին նոր եր հասկանում նաընկերոջ մտահոգությունը։

Մորթիներով վաթաթված, արդեն քնի մեջ, Դինդիապը քնքությամբ և մտահոգված հիշում եր նրան... կիմբալների աղմուկը... բազմաձայն լերգեցիկ խումբը... Ալբվող արմտիքների ծաւիսը... ծերունին...

Դինդիապն արթնացավ հաճախակի լսվող, հեծկատան-

քից, կես գիշեր երւ Հեկեկանքը լավուած եր Շարապի մոք-  
թիների միջից:

— Դո՞ւ լես, Շարապ,—կանչեց նաև

Վոչ վոք չպատասխանեց, բայց հեկեկանքը չեր գա-  
դարում. սարսուռը պատեց Դինդիսին:

— Շարապ,—բարձր բզավեց նաւ

Հեկեկանքը հանդարտվեց:

Շարապի ընդհատ և հոգնած ձախը շնչաց.

— Գնամ, Դինդիս, աղոթելու,

Ել վոչ մի խօսք չլսեց Դինդիսը: Նրա բարեկամն  
արդեն քնած երւ Յերազում նա քըթմնջուած եր, կարծես  
զանդապուած եր, ջղաձգորեն շնչելով:

Վոռնուած եր զանդը՝ հրավիրելով փոխարինողներին:

Հաղիկ նկատելի լուսանուած եր լերկինքը: Իջավալրից  
լովուած եր քնկոտ խրխինչ: Լուսագեմի ցուրաը սառցըել  
եր ծառերն ու կտուրները:

Իիսամութ տաճարուած ողը խեղդուզ երւ Նվագա-  
խումբը լուռ եր և միայն խումբն ամբոխի հետ միասին  
լերգուած եր խոպու և ուժասպառ ձախորվ, բամբուկի  
շաշունի տակ: Յեթե չլիներ ծերունին, մի ըռպե շան-  
ցած, բոլորը կընելին: Առավոտվա դեմ բամբուկն ավելի  
հաճախակի լեր շաշում: Շանճերը քնել ելին լամաների  
ալտերին և քնթաթախ ու ջրակարած շրթունքներին:

Դինդիսին ու Շարապը հանդիպեցին միայն շորքորդ  
որը: Ալդ ժամանակ միայն Դինդիսն իմացավ ընկերոջ  
տանշանքի պատճառը:

Շարապն ուժ շունենալով գիմանալ գիշերվա ժամաստ-  
ցությանը՝ լուսագեմին սկսել եր նիրհել: Նա գըեթե չեր  
կարողանուած հետեւել աղոթքի տակտին, փալտիկները  
դուրս ելին պրծնուած նրա ձեռքերից: Մացվելով նա արթ-  
նանուած եր, բայց քունը նորից հաղթուած եր նրան: Հան-

կարծ շահող բամբուկն իջավ նրա զլիին և ականջին։  
Նարվածից տարուքերվելով Շարապը նկատեց, թե ինչ-  
պես բամբուկը նորից իջավ արս անդամ կողքին նստած  
մոնթի գաղաթին։ Տղան ճշաց և կրծեց մատները, Հենց  
արդպես ճշաց անցլալ տարի մի մոնթ, վորը ծեծի տակ  
մեռավ։

Շարապն արդեն չեր քնում, թուք եր քսում աչքե-  
րը և ել ալնպես չեր որորվում, Զարկում եր թմբուկը։

Սակայն հենց հերթափոխությունից մի քիչ առաջ,  
ժամանացություն կականի տակ, նա աննկատելի կերպով  
քնեց, իրեւ վարձատրություն նա ստացավ լերկու հար-  
գած։ Բամբուկը ճեղքեց նրա կաշին։ Արլունը ծորաց վեր-  
թից։ Նա ընդարձացավ։

— Գնա, կանչիր Դինդիպին, — ասաց ուսուցիչը։

### ԲԱՄԲՈՒԿԸ ԽՓՈՒՄ Ե ԱՄԵՆ ԿՈՂՄ

Վեցերորդ որը Դինդիպն ու Շարապը մտնելով տա-  
ճար, քարացած կանգ առան։ Հենց ալնպես ել կմնալին  
կանդնած, բերանները բաց, լեթե ամբոխը նրանց շսթա-  
փեցներ։

Շրջանում բարձրանում, իջնում եր բամբուկը։ Մե-  
րունին հարվածում եր լերենիփալը փափած վանականին։  
Տղաները տեսան ծանոթ խալաթը, ածիլած գանգը և կո-  
շիկները։ Կասկած շկար, վոր դա իրենց ուսուցիչն եր։

Յերեփ լուրջ և աններելի լեր մեղանչել լաման,  
վորսիհետև ծերունին, ինքն արդեն շնչառպառ լեղած,  
շարունակում եր անդադար խփեր։

Վանականն ամուր կաղմվածք ուներ Միալն, ցըն-  
վելով, նա լերենին բարձրացնում եր գլուխը, սակայն  
նոր հարվածի տակ, նորից ձզվում եր իր տեղում։

Համենայն զեպս շնաջողվեց վերջնականապես վալը

զցել նրան, վահականը բարձրացավ ճռճիւղով, աշքերը  
խուփ...

Սերսւնին ճիպուսվ նրան դուրս հրեց շրջանից:

Մոնթերի համար արդ դեպքն այնքան անսպասելի  
իր, վոր սարսափը նրանց կաշկանդել եր նրանք չելին  
համարձակվում վերադառնալ խրճիթ:

— Ի՞նչ կանի մեղ լուսան, —հարցնում եր Դինդիպը.

Շարապը տարակուսանքով պատասխանում եր.

— Զգիտեմ... վախենում եմ:

— Պետք ե գնալ:

— Պետք ե գնալ, —համաձայնվում եր Շարապը:

— Դուցե չոլիտի գնալ:

— Ալո՛, ավելի լավ ե չգնանք:

— Ի՞նչ պիտի անենք մենք...

Սակայն շփոթության ըստեն անցավ:

Յերաժիշտները նորէց վերցրին թմբուկները և Դա-  
փերը:

Տղաներն ել վերցրին իրենց թմբուկները, Ահի հետ  
միասին նրանց պատել եր և մի ուրիշ զգացում, վոր  
նման եր բավականության—լաման պատժված եւ թուրդան  
պատժել եր ուսուցչին նրա համար, վոր նա այնքան ծե-  
ծել եր տղաներին թե տաճարում և թե դասերի ժամա-  
նակ:

Տղաները շփոթության մեջ անց կացրին աղոթքի  
ժամերը: Սովորականից ավելի լեռանդով ելին խփում թըմ-  
բուկները, նրանց թվում եր, թե վորքան լեռանդով  
խփեն, այնքան ավելի մեղմ կլինի ուսուցչի հանդիպումը:

Նրանց խիզնը պիտի մաքուր լինի:

Խրճիթի գուանը Դինդիպը բոլորովին թուլացավ, իսկ

Նըս բարեկամը գնում եր միայն նըս համար, վոր Դինդիպիպն ել եր գնում:

Սակայն սարսափելի վաշինչ շպատահեց, Դեռ ավելին՝ լաման լուռ եր և մինչև անդամ խոնարհ, բարձրանալով հատակից, վորտեղ նա պառկած եր կուռքի—Բուդղալի տնալին կերպարանքի առաջ, նա կամաց ջուր խնդրեց:

Զհավատալով իրենց աշրերին, ազաները քարացած մացին մորթիների վրա—այնքան անսովոր և անրացարելի ելին նրանց համար որվա դեպքերը, Նրանց շարունակ թվում եր, թե լաման խորամանկություն ե առաւմ, թե նա վոաքի կկանգնի և շարախնդորեն կարտասանի—«Դե հիմա մենք կխոսնաք», Ալդպես կասի լաման միաժամանակ արձակելով մեջքի գոտին:

Բայց լաման շարունակում եր պառկած մնալ կուռքի առաջ առածելով ձեռքերը Պանկած շնչում եր աղոթք—աղոթքի լեռնից:

— Ալդ աղոթքը նշանակում ե. «Տէր, բարի լեղիր դեպի բոլոր կենդանի արարածները», Ալդ աղոթքը կըկնում և ամեն մի մոնղու վոմանք կրկնում են այն առավոտից մինչև լերեկու:

Կամ հանկարծ ցնցվելով, նա շատապ-շատապ վոռնում եր զանազան անհեծքներ:

Մյուս որն ել նա նույն դըռութիւն մեջ եր, Յերեկուան նա Մոնթերին նստեցրեց իր առաջ և առաց.

— Զար վոզիները ինձ հալածում են, Յես մեղավոր եմ Բուդղալի առաջ, Յես ուկաս եմ արել—մուրղուլ:

1 Մուկուլ—մեղքերը քազիլ, ազաշխարհը, Շ. Թ.

Նենց վոր աղոթքների որեւը վերջանան, և մոնղոլները  
հեռանան ալստեղից, իես դուրս կդամ դաշտ:

## ԶՂՋՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ: ՄՈԽԴՂՈՒԻ.

Լուսագեմին լաման վեր կենալով արթնացըեց մոն-  
թերին:

— Ժամանակ եւ Գնացեց աշխատանքի: Յես գնում  
եմ դաշտը:

Նա ուղեորդեց դեպի կածանը: Իր հարեան լամալին,  
վոր շատ ծեր եր և միշտ քնած, հանձնաբարեց հակել  
ազաներին:

Դա աղատություն եր:

Հովտից հեռանարուց հետո, ալդ առաջին անգամն եր,  
վոր Դինդիոն ազատություն եր զգում: Առաջվա նման  
նրանց պիաի սւտելիք պատրաստելին, ջուր բերելին,  
վասելին, բալց ալդ բոլորն անում ելին ազատ, առանց  
վախենալու վանականի մշտական հալացքներից և ծեծից:  
Ռւսումը դադարել եր:

Կեսորվա զեմ Դինդիոլը լամալի համար ուտելիք  
պատրաստեց, փաթաթեց շարի կտորի մեջ և, կանդնելով  
Շարապի առաջ, ձևացրեց իրեն խոնարհ և մտահոգված:

— Հը լծւը եմ իես, — հարցնում եր նա Շարապին և  
լերկումն ել թուլանում ելին ուրախ ծիծաղից:

Նրանք աղմուկով զես ու զեն ելին ընկնում խրճի-  
թում, ամբողջ ձմեռվաընթացքում առաջին անգամ շոշա-  
փելով իրերը — և մորթե անկողինները, և սրբապատկեր-  
ները, աղքատիկ առանեղենը, վորոնց գուկնը զեռ նոր  
ելին նկատում, ալդքան ժամանակ բանեցնելուց հետո:

Թելի գավաթների վրա զիտեցին նկարի մանրամաս-  
նությունները: Պատի վրա տեսան սրբապատկերներ, վո-  
քոնց մլուս ավելի խոշոր պատկերների մեջ չեյին նկա-

առեւ թելը պղնձեր կուժի մեջ և տիբեթական գրքերի—  
առարերի—կազմելը,

Նրանք փաթաթվում ելին մորթիների մեջ, բուրգը  
դեպի դուրս և, դալի ձևանալով, հարձակվում իրար վրա  
ու գցում իրար։

Սակայն լամալի մոտ գնալիս պետք եր լուրջ ձևա-  
կալ։

— Դե, զու շծիծաղես,—զզուշացնում եր Շարապը,  
քայլ հաղիկ եր իրեն պահում, լերը նախում եր Դինդի-  
պին։

Նա, աշխատելով խիստ լինել, ծիծաղաշարժ ծանո-  
մածութլուններ եր անում։

— Յես չեմ կարող... ծիծաղելի լե։

— Կիշի, Դինդիպ, թե ինչպես և ցավում, լերը  
քոթաքում են մեզ և այն ժամանակ ել ծիծաղդ չե դա։

— Ահա ալսպնա։

— Ալո՞ւ, ալսպնա։

— Ալսպնա։

— Ալսպնա։

Ու նրանք նորից ծիծաղից թուլանում ելին և, ծա-  
մածութլուններ անելով, պազում մեկը մըսաի առաջ,  
փոքրիկ ինչպես կապիկներ։

Բայց լերը ճանապարհվում ելին զեպի մուրզուլի կա-  
տարման անդր՝ ուրախությունն ինքն իրեն անհայտանում  
եր, Դինդիպը լամալի համար առնում եր կիսահում ա-  
նալի մսի մի կտոր, վոր վանականի սիրած կերակուրն  
ներ։

Դաշտում, ցանկապատից դուրս, վորանդ վանականն  
ոկնել եր իր աղոթքը, Դինդիպը տեսավ և ուզիշ լամա-  
շների—նրանք բոլորը մուրզուլ ելին կատարում, քավելով  
իրենց մեղքերը։

Դաշտը տըոըված եր և միենուլիս ժամանակ անհարթ, կարծես այդուեղից չտեսնված կենդանիների մի հոռ եր անցել, վանքի շորս բոլորը լերեզում ելին վոռքերի ծալքերից գուացած փոքրիկ փոսիկներ ու ձնկների հետքերու կամաները հանկարծ տարածում ելին ձեռքերը, հետո ծալում կըծքներին, ընկնում լերեսնիվալը և աղոթք անում, Ապա ամբողջ հասակով մեկ ձգվելով վեր, նըանք լերկու քալլ ելին անում դեպի այնտեղ, վորտեղ ծունը դնելու ժամանակ գլուխը դիպել եր գետնին և ձեռքերը տարածած, նորից փոփում դետնին:

Ալսղես ձունը ձունը լետեից, լամաները լերեք անում պիտի պատվելին դացանի շուրջը:

Ալդ տարարինակ կերպարանքների շարանը փովել եր դաշտով մեկ և հանկարծ բարձրանում ու ընկնում եր գետին, կարծես ինչ վոր հրամանով:

Ելը Դինդիպը ճանաչեց ուսուցչին, նու արդեն բարվական հեռացել եր այնտեղից, վորտեղից սկսել եր մուք-դուլը:

Համան միսն ընդունեց լուսթլամբ և ագանութլամբ սկսեց ուտել — զա միակ ուտելիքն եր մինչև հետեւալ կեռը:

Հալնարձակ լերկինքը տարածվում եր վանքի վրա Փշում եր թեթև տաք քամին, Ամպերը շարժվում ելին դեպի տրեմուտք:

Դինդիպն սկսեց մեղմ լերգել

ԽՈԽՎԱՐԱԿՆԵՐԻ

Վերադառնալիս Դինդիպն իշտվալրաւմ աեսավ մոնղոլիների, վորոնք կաթսալից հանում ելին վոչխարի միսն ու խժուում, Հեշտութլամբ կարելի լեր պատկերացնել, թե ինչքան լախարձակ տեղ ելին բռնել ուխտավորները ուշ

հրապարակում, վոր խիստ կոխոսված եղ, աղուստաված և  
վորի վրա ամենուընք լերեռում ելին մոխիր դարձած  
ոչախների հետքեց, թափթփված կըեղնեց ու վոսկոր-  
նեց:

Սուրբ նեխահոալը քիթ եր ծակում:

Ճանապարհին Նրան հանդիպեց Շարապը:

Նա ստատիկ վախեցած եր լերեռում:

— Մի խուվարակ են բռնել — ասաց նա,

— Խոսքարակ... Ո՞վ

— Մեկը փախել եր — բռնել են:

Տղաները վախից փակվեցին խրճիթում. Շարապը բա-  
ցատրեց գործի երաթյունը:

Ռոնթին բռնել են դաշտում: Ուժապառ լեզած, նա  
ընկել եր ուխաից վերագարձող մոնղոլների ձեռքը: Մոն-  
ղոլները Նրան լետ են բերել դացան:

Շարապը հանդիպել եր վանականին, վորը քշում եր  
պարանով կապած վախստականին: Լամալի հարվածների  
տակ մոնթը վալը եր ընկնում և նորից ձգում պարանը,  
Լաման հարվածում եր նրան կաշվե գռափակ: Ամրոխը,  
վոր հավաքվել եր լամալի ձալնին, հալածում եր մոնթին,  
ով ինչով կարող եր:

Ժամանակ առ ժամանակ թվում եր, թե տղան ել  
վեր չի կենա — սպանված եւ Բալց նա նորից եր վեր  
կենում սրորդելով և ձգում վանականին, աշխատելով  
խուսափել հարվածներից:

Մըսու որը տղալի դիմելը ցանկապատից գուրս առ-  
բան:

Ալդ դեպքը պղտորեց Դինդիպի և Շարապի կարճա-  
ռու հանդիսուց Դա վասազգեց դացանի բոլոր մոնթերի  
վրա: Նրանք հանդիպում ելին Դինդիպին և Շարապին

ընդհանուր աշխատանքների ժամանակ — ջրհողների մոտ  
կամ վառելիք հավաքելիս:

Տղաների դեմքերը մթազնել ելին: Նրանք աշխատում  
ելին հեռու մնալ իրարից:

Ընդհանուր խաղի մասին խոսք անգամ չեր կարող  
լիներ բայց և ընդհանարապես մոնթերի շրջանում ընդ-  
հանուր աշխատանքի ընթացքում չկար վոչ մի միանու-  
թուն, վոչ ել փոխադարձ կարեկցություն:

Յերեմին պատահում եր, վոր Դինդիպն ու Շարապը  
փորելով թփի արմատը, փորձաւմ ելին հանել այն, բայց  
անհաջող: Մուս զուգգը, մռալլ դիտելով նրանց զուր  
չարչարանքը, սպասում եր, թե լերը առաջին զուգը ձեռք  
կըացի, վարպեսզի ինքն այն ժամանակ, նույնպես անո-  
գուած, ձիգ տա՝արմատը, Նրանց սպասում եր լերը դգ  
զուրգը քսաւալով և նայելով հոնքերի տակից:

Յեղ արդ արմատը, և ուրիշ հարլուրավոր արմատ-  
ներ, վոր կարելի լեր հեղությամբ հանել և բաժանել  
իրար մեջ, մնում ելին հողի տակ:

Յերեմին կավաւմ ելին. լերկու-լերեք մոնթեր, զա-  
նազան խրճիթներից, հարձակվում ելին մի կտոր աթարի  
վրա և այնքան արորում, վոր փոշի լեր դառնում, հետո  
կտապած հարձակվում իրար վրա:

Կոիվն ել դարձանալի լեր իր բթությամբ և մռալլ  
կատաղությամբ, կղջում ելին լուս և այնքան չելին ծե-  
ծում ծեծվում, վորքան պատասխան ելին իրար խա-  
լաթներ: Կոիվը վերջանում եր արագ:

Մինչեւ իսկ այն տղաները, վորոնք Դինդիպի և Շա-  
րապի հետ տաճարում նստած ելին կողք-կաղքի, Թմրուկ-  
ների մոտ, — Նրանք ել շանկապատից գուրս հանդիպելիս  
բարլացակամության նշույլ անգամ չելին ցուլց տալիս:

Հաճախ մերկ մարմնի վրա խալաթ հազած խուվա-

բակը լերեմն նստում եր արեի տակ տաքանալու, բայց  
նրանցից վարևե մեկը լերեք չի վազի արջամկան լետե-  
վից, չի բարձրանա ծառը, մրցության չի մտնի իր հա-  
սակակցի հետ, թե վորն ավելի հեռաւն կցցի քարը:

Մտքերով ու խաղերով Դինդիավն ու Շարապը մնում  
ելին մենակը նրանց խաղերը խրճիթի շեմքին վերջանում  
ելին:

Փախստական մոնթի թաղման որից, նրանց մեջ  
ինչ վոր փոփոխություն եր կատարվելու կամաց կամաց  
Տղաների միակ զբաղմունքը դասնում եր խոսակցությունը՝  
Միշտ կիսամայն խոսում ելին սարսափների մասին:

Ուսուցիչը շարունակում եր մուրդուլը:

Դինդիապը կամ Շարապը սաւելիք և ջուր ելին տանում  
նրա համար, նա լուր հանդիպում եր նրանց, ուտում ա-  
գանաբար, չորրորդ որը հրամալից վոչինչ չբերել, բացի  
ջրից, Վեցերորդ որը լերեկուան դեմ արդեն քիչ եր մնա-  
ցել մինչև այն աեղը, վորտեղից նա սկսել եր իր զըդ-  
ջումը, Մուրդուլը դրանով վերջանում եր:

Ենի, վերջապես, նա հալտնվեց խրճիթի շեմքին, նա  
կատարեց իր ուխտը՝ մուրդուլը, ալսինքն լերեք անզան  
քարշ լեկավ դացանի շուրջը:

Ամբողջ առաջին որը նա քննեց:

Նա սաստիկ նիհարել եր, Թիթը, վոր առաջ շատ  
հասա եր, հիմա բարակել եր, ինչպես աքաղաղի կատար  
Յերեսին կաշին կախվել եր ծալքերով:

Նա լերկորորդ որն ել քննեց, իսկ լերեկուան չտփեց  
դուրս զիսկվեց:

Գիշերը աղաները հերթ ելին պահում, վանականին  
ջուր և զեղեր մասուցելով, Բատ լերևութին շատ զըխկ-  
վելուց նա փքվել եր, Ծնթում եր, խոխում, գարշելի-  
նու արձակում,

## ՏԵՐ ՈՂՋՐՄՑՅԱՆ ԵԼ ԲԱՄԲՈՒԿԻՑԻՑ ՊԱԿԱՍ ԶԻ ԽՓՈՒՄ

Ուսումը վերսկսվեց:

Յերեկի լաւան արգեն գիտեց մոնթի հետ պատահած դեպքը, վորովհեան աղաների վրա նայում եր առանձին կասկածանքով: Հետեւում եր նրանց ամեն մի շարժմանը, կարծես աշխատելով իմանալ, թե ի՞նչ ազգեցություն ե ունեցել նրանց վրա այդ դեպքը:

Մինչ Դինդիալն ու Շարապը վարոնում ելին իրենց ալբուրենը, յաման նիբոնեց:

Տղաները խոնարհարար նստեցին, սարսափը ուղարկեցում և նայում ելին իրաց: Ուսուցիչ քնածը եր:

Յերկար ժամանակ—մի կամ լերկու ժամ—վանականը չեր արթնանում: Տղաներն սկսեցին հազար, քիթները վեր քաշել, անհանգստանալ—ուսուցիչը քնած եր:

Շարապը համոզում եր.

— Արթնացը ու

Դինդիալը նրան, թե՝

— Չե, դու:

— Չե, փոքրը չի կարող, մեծ մոնթը ուսուցչին ավելի մոտիկ ե:

— Դու ինձնից շուտ ես դաշան լեկել:

— Գուցե հարկավոր չի արթնացնել:

— Ալո՛, ավելի լավ ե չարթնացնել:

— Նամի՞ր, նա թռչնի նման ե:

Շարժումները և քչիչոցը վերջապես արթնացըին քնածին—փոխոցը դադարեց:

— Ա՞ւք են դրքերը—հարցրեց նաւ—Դինդիալ, կարդա:

Տեր ողորմիան, զորից զլուխներն արդեն հանգստացել ելին, նորից ուսուցք առաջացրեց: Արցունքը փալեց նրանց աշքերում, Դինդիալի աշքին տառեցը հանկարծ

շարժվեցին ու մըջուռնների նման կախվեցին իրարից, իսկ  
արցունքներն ընկան գըքի վրա:

Դինդիպը լամակի լեռներց կրկնում եր անբնտկան  
ձայնով.

— Խաղարխալ — խա... խոդիդո՞ն — խո... տողսուտալ —  
սա...

— Յալնի — նա... չիդորդո — դա... դիսսախան — ա, ձալ-  
նակցում եր Դինդիպին. Շարապը.

Նա Դինդիպից ավելի լավ եր նմանեցնում ուսուց-  
չին:

Սակայն Շարապն ևս քաջալերման խոսքեր չեր լսել  
նու ել շատ հաճախ խրառներ եր ստանում տեր ողորդլալից:

Ծան զփոթության մեջ ընկապ՝ մեկ տառերն եր  
բաց թողնում, «տողվետուտալի» փոխարեն կարգում եր  
— «տողվետուտալ», մեկ ել ավելացնում եր՝ փոխանակ տ-  
սելու «խոլար» — «խոլարդ» եր ստում:

— Դե «խոլարդ» չե՞ — չխոլար... խոլար, խոլար...  
կրկնում եր գանականը, շրիկացնելով տղալի ճակատին:

Նա նգովում եր այն հալըերին, վորոնք ուղարկել  
ելին Դինդիպին ու Շարապին:

— Եսո լերեր չեմ կարող լավ լսմա լինել — մըսա-  
ծում եր Դինդիպը: Աղոթքներ չեմ կարող սովորել և  
Բուզզան ինձ չի լսի:

— Արաեղ արի:

Լաման բռնեց նրա ականջն ու, մասների արանքում  
խիստ վոլորելով քաշեց գեղի իրեն: Դինդիպը հեծլկաց:  
Շարապը նաևց Դինդիպին, ու նրա գեմքը սարսափ ար-  
տահալտեց: Դինդիպի ատամները խըվել ելին լամակի  
մուրդուլից հետո շորացած ձեռքի մեջ:

Դինդիպը, ծնուաները պինդ ոեղմած, շան նման  
կողել եր նրա ձեռքին: Լաման հուսանատ աշխատում եր

աղատվեր Վերջապես ուժասպառ լինելով, Դինդիպը թողեց ձեռքը:

Նա հատակին պառկած մնաց մինչև լեռեկու Միաւն այս ժամանակ, լեռը լաման զուրս լեկավ տնից, Եաբապը մահու չափ ծեծված իր ընկերոջը քաշեց մորթիների վրա Դինդիպը գրեթե ուշքը կորցրած զառանցում եր—քշում եր ինչ վոր մեկին, կանչում եր ալծեղին ու անհանդիստ շարժվում:

## ԶՈՐՌՈՐԴ ԳԼՈՒԽ

ԴԻՆԴԻՊԱԼ ԿԱԶԴԻՈՒՐՎՈՒՄ և ՓԱԽՉԵԼՈՒ ՄԻՏՔԸ,

Դինդիպալը դանդաղ եր կազդուրվում:

Լաման հրամալեց նրան քաշ առաջ նկուզ:

Մութ նկուզը խռնավ եր և գարշահոտ Այնուեղ  
ապրում ելին սարդեցն ու մողեսները:

Նրա ճիվանդության որերին Շարապն աշխատում եր  
լերկսի փոխարեն և լերք հեռանում եր խրճիթից, Դինդի-  
պալը մենակ մնալով ուրախությամբ լսում եր, թե ինչ-  
պես ճռվողում եր ինչ վոր թռչնակ, վոր հավանորեն,  
եր բունը հրուսել եր մոռերքում:

Կիսարաց զռնից նա ակսնում եր ամառալին փար-  
լուն սրբ Արեւ ներա եր թափանցում նկուզը, լուսավո-  
րելով մռալլ ու հոտած անկունները:

Ժամին ժամանակ առ ժամանակ բերում եր տաք  
ող, լերբեմն և փաշոտված մի տերմա:

Դինդիպալ ձգվում եր գեղի շեմքը և այն ժամանակ  
շողը հասնում եր նրա ուսին կամ լերեսին:

Կյանքի պարմաններն անտանելի դարձան: Դինդիպալն  
զգաց, վոր այն ամենը, ինչին նա վարժվել եր տանը,  
արտեղ իրեն հակառակ եր դառնում, և վոր ինքն արտեղ  
վոչնչանում ե — արտեղ պահանջվում ե կես մարդ, քառորդ:

մարդ, մարդաստվերի ձուլսը քանի գնում նվազում եք։  
Մնաս բարձրվ, Դուրսպն - Խոտոռի. Մնաս բարձրվ Ուղան  
— Բառորդ

Լաման սկսեց անհայտանալ լերկար ժամանակով։  
Յերբեմն դիշերն ել տուն չեր գալիս Շարապը խոնար-  
հարար կատարում եր տան աշխատանքները։ Զըախառն  
թրիքով նա բժշկում եր Դինդիսի վերքերը։

Դինդիսը լուռ եր

Լուսնի լուսի տակ Շարապը կարկատում եր տոսկ-  
ըակը, Լաման չեր վերադառնում Շարապը նստել եր  
նկուղի շենքին, լետեր դեպի Դինդիսը, տոպրակն եր  
կարկատում և նալում ճանապարհին

Դինդիսը կանչեց նըան։

— Լսիր, — ասաց Դինդիսը, — կուզմս ինձ հետ գնալ  
— Ուր, — հարցրեց Շարապը, — Ուր գնար

Բոլորովին գնալ... Դացանից,

Շարապը քարացավ, ապա վազեվազ մատեցավ դը-  
ռանը ու վախեցած շշնջաց։

— Կարծես լաման գտիս ե...

Սակայն ճանապարհին մարդ շեր լերեռում Հեռվում  
լուսինն առաջ լուրս եր սփռում շուրջը Շարապը լուս  
կծկվեց դռան կողքին։

— Ե, վճնց թե, — փսփսում եր նա։ — Ի՞նչպես թե  
«զնալ», մ'որ կգնաս դու, Դինդիս։

— Շարապ, դու ինձ լսիր։

— Պետք չի, իս վախենում եմ, — պնդում եր Շա-  
րապը։

Այդ գիշեր վախչելու մասին ալես խոսք չեղավ։  
Տղաները մլուս որն ել շխռսեցին ալդ մասին։

Շարապը պարզապես խուլս եր տալիս արդ մասին  
խռովուց, իսկ Դինդիսը, մի անգամ որտահայտվելով,

կարծես ինքն ել ամաչեց, Բայց փախշելու միտքը մի բռպե անդամ նրան չեր թողնում, Նա ամբողջովին համակած եր արդ մտքով:

Առողջանալուց հետոնա Շարապի հետ նորից գնում եր ցանկապատից դուրս, վառելիք հավաքելու, Հիմա նա ավելի շատ եր մնում դաշտում, ուշադիր դիտում եր ճանապարհը, մոածելով, թե ուր ե տանում նա, Հանկարծ նա հանդիպում եր Շարապի լերկչոտ հարացքին և, մի կողմ թողնելով լերազանքները, նորից սկսում եր վառելիք հավաքել:

— Այսր մւր փախչել, — հանկարծ հարցը Եարապը: Հանկարծակի տված հարցը Դիոթեցը Եց Դինդիպին: Նա զարմացած նայեց ընկերոջը: Նա զլուխը կախ նստել եր տոպղակը ձեռքին:

Այն լերազանքը, վոր ամբողջ մի տարի կենդանութեան եր տալիս Դինդիպին, արժմ միայն նրա դադտնիքը չեր—արդեն Շարապն ել եր համակվել արդ գալթակդութեամբ: Նա վոչ մի բոպե չեր կասկածում, վոր անհրաժեշտ ե փախչել:

Ծնցելով Շարապի թեր, Դինդիպն շտապ պատմում այն ամենը, ինչ ինքն արդեն գիտեր:

Նա պատմում եր Շարապին Ուլտն—Բատորի դպրոցի մասին:

Ամբողջ գիշերը խուվարակները լուս նստած ելին խրճիթում: Փախչելու ժամկետի մասին չեցին պարմանավորվել: Սակայն չհամարձակվելով արդ մասին խոսել, Դինդիպն ու Շարապը, կարծես, արդեն լուռ պարման ելին կապել—փախչել առաջին իսկ հնարավորութեան դեպքում:

Գիշերը դարպանը կողպվում եր:

Թագանի խցերում, աեղ-աեղ Ալիան, պլայում ելին  
ճրագները.

Իրենց խըճիթումնել մոռք եր, Վանականը, ըստ  
սովորականին շափից դուքս զիօկվելուց անքում եր և հա-  
ճախ արթնանալով ջուր կամ դեղ ուղարկե: Տղաները հոգ-  
սերով յի, սպասում ելին առավոտվան:

Ալդպես անցնում ելին զիշերներն իրար լիտեից:

Մի անդամ դասից հետո լաման գնաց, կարգադրու-  
թում անելով խուվարակների պարագմունքների մասին:  
Արդ բանը թուլլ եր տալիս մոտածելու, վոր լաման գնաց  
էնրկար ժամանակով:

— Մի տես, — ասաց Դինդիպը:

Նա բռնեց Շարապի ձեռքը և շշափել տվեց գլխի  
ալին ուսուցքը, վորը գեանս տաք եր:

— Հապս իմը տես, — պատասխանեց Շարապը:

Արդ շարժումներով նրանք, ըստ լերնութին, աշխա-  
տամ ելին նորից և նորից հաղթահարել անվճռականու-  
թունը՝ պիտք ե փախչել:

— Ձուր և հարկավոր, — ասաց Դինդիպը:

Տղաները ցանկապատից դուքս լեկան:

Շարապը գողում եր ամբողջ մարմնով, լերը Դինդի-  
պը կանգ եր առնում հանգստուանալու կամ վառելիք հա-  
զաքելով, հեռանում եր նրանից: Հուզմունքից դոդալով,  
Շարապը հազիկ եր կարողանում պահել ջրնորի մոտ ջրով  
արտծ կաշվե դուլերը:

Արճիթի դռանը նասալթաքեց, Ցեղան կաշվից շինած  
դուլը զիպավ կոտքին, ջուրը թափվեց հատակին:

Շարապը հանկարծ պառկեց լերեսն իվալը և սկսեց  
հավաքել ջուրը, կարծես թափվուծ հատիկ լիներ:

Նա ջղաձգորեն սկսեց խեղզվելով կուլ տալ թափված  
և կեղասաված ջուրը:

— Շարապ,—գոչեց Դինդիպը լերկլուղով լի: — Եա-  
բապ, ի՞նչ ե պատահել քեզ:

— Լաման... լաման կտեսնի, — քըթմնջում եր խու-  
վարակը:

Դինդիպը վալը դըեց իր բեռը և աշխատում եր դըս-  
պել խելակորուլս Շարապին:

— Չանես, — բղավեց նա, — չամարձակվես լիդել,  
ես բոպելիս կփախչենք, լսում ես զու, Շարապը Վեր  
կաց, ասում եմ, փախչում ենք...

— Դինդիպ, — կրկնում եր Շարապը, — հարկավոր, չենա  
մեղ կսպանի...

— Անց հիմա... հենց հիմա... ձեռք չեր քաշում  
Դինդիպը:

Նա, ինչպես հրզենի ժամանակ, վազվում եր սեն-  
յակում, վերցնում եր իրերն ու ելի դնում տեղը: Բոլոր  
արկղները, արկղիկներն ու տուփերը կողպեքներով փակ-  
ված ելին: Մասանի վրա կախ ելին տված ծանր կող-  
պերներ Միայն մի աման կորեկի ալլուր եր մնացել:  
Դինդիպն ալլուրը լցըեց թեքի մեջ:

— Հարկավոր չե, ի՞նչ ես անում, հարկավոր  
չե, — թոթովում եր Շարապը և ինքն ել, Դինդիպի հետ  
թեքր բացելով, ալլուրը լցնում եր նրա մեջ:

Դասն առաջ տղաները, ակամա ուշքի դալով, կանդ  
առանտ նրանց ձեռքին կար պարան և տոպրակ — կարծես  
վառելիքի ելին գնում: Տննդալին վիճակում, ամեն բոսք  
լամալին հանդիպելու լերկլուղի ասկ, աղաները հասան  
մինչև ցանկապատը Նըանց վոտքերը փաթաթվում ելին  
իրար:

Դարպասով անցնելին, Դինդիպը սովորաբար չեր  
նկատում ալն, իսկ արժմ այստեղից անցնելը սարսափե-  
մի լեռ թվում նրան:

Պարանը, կարծես դիտմամբ, խճճվեց:

Շարապը կանգնած եր սարսափից գունատված դեմքով, Ամեն ինչ ստարոտի լեր նրանց համար, Դինդիպը Շարապին լերբեք չեր տեսել արդպես ալլալլված։ Ցանկապատից դուրս — դաշտն ու ճանապարհը պսպղում ելին անսովոր փալլով։

Քամին վիշտում եր փոշին և վոլորում մաղի հրուսի նման։

Վերջապես նրանք լեկան ալնտեղ, վորտեղ միշտ վառելիք ելին հավաքում։

— Հավաքիք, հավաքիք, — կրկնում եր Դինդիպն ու ինքն ել կունում, սակալն չեր հավաքում։

Շարապը հետեւում եր նրան և նույնպես ձեացնում, իբրև թե հավաքում եւ։

Ցած մացառուախից գենը, վորտեղ ալես աննկառելի ելին նրանք, տղաները վաղեցին։

Նրանք շունչ առան հեռվում ձզվող բլբաշդակի թփուներում վանքն անհարտացավ, Խոչ վոր մի սորիշ տշխարհի բնութլուն եր բացվում նրանց առաջ, Յերեկոն եր մոռենում։

— Դոփլո՛ւն, — ասաց Դինդիպը։

Սակայն վոչ մի ձալն չեր լսվում։

ՓԱԽԱԿԱՆԻ ՏԱՐԱԾՈՒՅՈՒՆ

Ցուքու դիշերն անցավ։

Ցղաները քնած ելին դրկախառնված։ Արել ծագելով իսկույն նրանց տաքացրեց, Դաշտում ամեն մի ավաղի հատիկ առանձին փառ եր սասացել։

Շարապն առաջինն արթնացավ, Նա հրեց Դինդիպին. վերջինս արթնանալով դարձացած դիտում եր դաշտը, իւրկինքը։

— Ի՞նչ, — հարցը եց Շարապը, — գնա՞նք, ժամանա՞կն եւ Դինդիկը հիշեց իր հետ պատճառծը, իմացավ թե ինչ դաշտ եւ իր շուրջը փռված և թե ինչու լե ինքն ալղտեղ՝ Գոհունակութիւնն ժամանակ նըա դեմքով:

— Հիմա կը նանք, — ասաց նա, բայց միննուն ժամանակ նա պատրաստ եր ելի մի լերկու ժամ պառկել ալդ փայլուն ավազների մեջ, հրճվելով աղասութիւնն զգացումով:

Մակարն Շարապն շոապեցնում եր:

— Գնալու ժամանակ եւ, դացանն ալնքան ել հեռու չե, և շուասվ շոգը կընկնի:

Հայանաբերվեց մի մեծ կորուստ. Յերեկ, փախչելու ժամանակ, Դինդիկի թեքը բացվել եր և ամրադ ալուրը թափվեր, Փախչելու տենդով բռնված, նըանք ալդ բանը չելին նկատել:

Մնացել եր միարն մի թեքի ալուրը — Շարապի թեքի:

Նըանք չգիտելին Ուլան — Բատոր քաղաքի ճանապարհը. Դինդիկը վճռեց գնալ արևելքից դեպի ձախ:

Շուտով շոգն ոկսեց նեղել նըանց, Ողը տաք եր, ինչպես հնոցում:

Շարապն տռաջարկեց կանգ առնել, լենթագրելով, վոր ավելի լավ եւ ճանապարհ գնալ լերեկոներն ու գիշերը:

— Մանավանդ վոր հիմա, — ասում եր նա, — գիշերը լուսնուակի լուս եւ լինում:

Փաթաթվելով խալաթների մեջ, աղաները պառկեցին խղճուկ թփուտի տակ, բայց շուտով արթնացան ոնտանելի ծարավից. Բերաններն ու կոկորդներն ուղղակի ցամաքել ելին:

Աըեց գեռ բարձր եր:

Ցերեկողան դեմ նրանք մոտեցան արջամկների ընավալիքութիւն, Ամեն տեղ, ուր աչքը հասնում էր, լիրառում ելին բծեր, Դրանք հոգի մնթաշերտերն ելին, վոր փորել ելին արջամկները: Արդ դադանիկներն անհոգ սուլուս ելին ալս ու այնտեղ, Դնչները քամուն դեմ արած նրանք հասառում ելին ողն ու ձգվում լեռնի թաթերի վրա, դաւրս ցցելով առածիդ փորն ու ցնցվելով ամբողջ մարմնով:

Դա այն դաշտերից մեկն էր, վորոնք պատկանում էր Մանղոլիալի արջամկներին: Արդ լերկրում դրանք անթիվ բազմություն են կազմում: Նրանք տիրում են լերկրի ամբողջ հլուսիսալին կողմը:

Իրենց խոր ըները փորելիս, նրանք գուրս են շըպըրառում այն հեղը, վոր բավական պաղավետ եւ բուսականության համար պիտանի: Անա թե ինչո՞ւ արդ դաշտերը միշտ ծածկված են բուսականությամբ, լերը շըմապատում արգեն ամեն ինչ չորանում եւ:

Տղաները մասն արջամկների դաշտը, վոր նման եր գաճաճալին անտառի:

Նրանք փորձեցին ծծել ցողունների խոնավությանը, բայց արդ չոգնեց և ծարավն ավելի անտանելի չափերի հասավ:

Անասելի ծարավը զարթեցրեց Դինդիպի մեջ մի շշմեցնող հիշողություն—թարժ ջրավ լի զսւվեցը: Նա հիշեց գետնին թափված ջուրը, Շարապի շըթունքները, վորոնք ծծում ելին արդ ջուրը և թաց ելին, իսկ չորս կողմը պղառըված ջրի լճակու:

Ո՛, վորքա՞ն ջուր ունելին նրանք, Մի ջրհոր գեղի ցանկապատը տանող ճանապարհին, իսկ մրւաը ճանապարհը թեթվելուց հետ այն կողմը:

Դինդիպը թափահարեց իրեն, ամաչելով իր թուլամբը թուլթուլիսից Նալեց իր ուղեկցին, Շարապը գնում եր մթագնած հալացքով և կենորոնացած։

Խոսելու ուժ չունելին նրանցից ամեն մեկը քար-  
յում եր և կիսագիտակցաբար մինուն՝ միտքն անում։—  
«Ի՞նչ պիտի պատաճի վաղը»։

Արջամկների գաշտերը դեռ շարունակվում ելին։  
Արեն իշխում եր՝ հարթութունը վորոշակի բծավորելով  
արջամկների բների սովերներով։ Տոթը թուլանում եր և  
շնչառութունը թեթևանում։ Դաշտը հեռվում ըլլապա-  
փում եր։

Արեր մայր մտնելուց անմիջապես հետո մութը վրա  
հասավ։ Տղանեցը կանգ առան, սպասելով լուսնին Սար-  
սափը պատեց նրանց Շուրջը սուլում ելին ուշացած  
արջամկները։ Քամին զավանում եր ու խշխշում, դիոջե-  
լով արջամկների բներին։ Դետինը հովանում եր։

Մութ կապտավուն գիշերը ծանր առկաթում եր։

Վերջապես լուսինը վեր սողաց, Դինդիպի բանը  
տարավ, իսկ Շարապը նստած եր և կիսաքրուն դրութոն  
մեջ լսում եր արջամկների սուլոցը նա շատ եր վախե-  
նում։ Մարակը տանջում եր նրան։ Դինդիպը շնչում եր  
ծանր, ինչպես հիվանդը։

Լուսինը բարձրանում եր, դաշտը կենդանացնելով  
սավերների շարժումով։ Ստվերները ձգվում ելին, ծովոե-  
լով թիերն ու խոտերը։ Ամբողջ տարածութունը շարժ-  
ման մեջ եր։

— Յես սարսափում եմ, — շշնջում եր Շարապը, թե-  
թեակի հրելով Դինդիպին։ Նա խորը քնած եր։

— Արխացիք, Դինդիպ, յես վախենում եմ...»

Նա քնած եր։

— Դինդիպ, զնալու ժամանակ եւ

Նա քնած եր և շնչում եր ծանր։

Քամին քանի գնում զովանում եր, գետինը կորցրել եր  
իր առքությունը, Վերջապես ցուրան արթնացըց Դինդի-  
պին, նա վեր կացավ, գրեթե հիվանդ, մշուշոտ գիտակ-  
ցությամբ կեղուն ուռել եր բերանում:

— Գիտի զնա՞լ, — հարցըց նա քնաթաթախ:

— Գնա՞նք, արդեն լուս եւ

Յերկու ժամ քալելոց հետո, նրանց սպասում եր  
նույնը, ինչ վոր լերկու ժամ առաջ—միննուկն դաշտը:  
Խիստ փալիքի գետինը և պարզ գծադրված ալանդակ  
սովելըները, վորոնք արգեն սկսել ելին կարճանար:

Լուսինը բարձրացել եր:

Արժմ, լսելով իր կողքից քալող Դինդիպի վունա-  
ձալնը, Շաբապը սրտապնդվել եր:

Յերկուսով Միասին ավելի հեշտ ելին դիմանում հու-  
սանառությանը, Շաբապը, կարծեա, զրուցում եր Դինդի-  
պի հետ, վորը նույն սարսափի և հուսահատության մեջ եր։  
Սիրաները նեղված եր Ի՞նչ եր սպասում նրանց Հիմա,  
իթե ուզելին ել, չելին կարող գանել զայտանի ճանա-  
պարհ:

Ճանապարհը բարձրանում եր սարնիվեր։ Արջամկնե-  
րի ըներն ալլու հաճախ չելին պատահում Տղաները  
բարձրանում ելին լետեի հենց այն լեռնաշղթալի վրա,  
վար նկատել ելին արեւ մալը մանելուց առաջ։ Շուշով  
կրահողի ընկորներն ստիպեցին նրանց համար ճանապարհ  
վորոնել Ալտեղ ստվերներն ավելի սև ու մութ ելին,  
ինչպես իրար վրա կիսվաղ ժալուերի խոռոշներում։

Արեւելն արդեն գունատվում եր, Փշեց քամին, կար-  
ծես նոր բեկած գլունի շունչը լիներ։

Լուսի շիթերը տարածվում ելին ողի մեջ։

Լուսապեմին ճանապարհը փոխվեց։ Լեռնաշղթալից

ներքեւ լերեաց բուսականությունն Տղաների վոտների  
տակից դուրս ողբջավ մի մողես Ալստեղ կարող եր ջուր  
լինել:

Տղաները կանգ առան և ականջ դրին լի հուլսերով,  
Թփուտներում միայն աղմկում եր քամին: Յեզ հանկարծ  
Դինդիպն, ուղեկցից առաջ ընկնելով, բզավեց ու փովեց  
գետին:

— Զո՞ւր, Շարապ, ջուր կա եստեղ:  
Ժարոի տակից աղբլուր եր վազում:

Փոքրիկ աղբլուրը ծորում եր, կորչելով լերկութե-  
րեք քամի վրա սակայն նրա շուրջը պատել եր թարժ,  
ճոխ բուսականությունն և կախ ելին ընկել խոշոր ծաղիկ-  
ները:

Տղաները վազեցին գեղի ջուրը, իրարից խելով լրի  
հոսանքը ու խեղդվելով:

Ճանապարհորդության լերկուրդ որը լերեկուան  
նրանք նորից ընկան ավագների մեջ,

Աղբլուրը բավականաշափ նորոգեց նրանց ուժերը,  
բայց վոչ լերկար ժամանակով:

Թաղցը համառորեն զգալ եր տալիս իրեն. Շարա-  
պի թեքը վաղուց դատարկ կախ եր ընկեր

Տղաները ջրով թրջեցին փեշերն ու թեքերը, վոր-  
պեսզի ճանապարհին թացությունը ծծեն, բայց արեր  
քառորդ ժամում ըոլորովին չորացրեց:

Թամին փշում եր ճախիկին ուժգնությամբ նա  
սկսվել եր զիշերը, գեռ արջամկների գաշտում, փշում եր  
լայնարձակ աարածության վրա, վեր հանելով գետնից  
ավագը ու շաղ տալով ամեն կողմէ

Մի տեղ ճանապարհին տղաները տեսան մի ուղափ  
դիակ, վոր արդեն հասում եր և չեր կարող նրանց իրըն  
պաշար ծառալել, բայց նրա ներկալությունը մի թուլ

հուլս եր ներշնչում վոր արտեղով, հավանաբար, անց-  
նում ե քարավանի ճանապարհը, նրանք փորձում ելին  
վորեւս ուրիշ հետքեր դանել, առկայն ավագն ամեն բան  
խառնել եր իրար ու ծածկել իր տակ:

Արեւ մալը մանելու մոտ ըուքն ուժեղացավ: Թա-  
մին ավլում, առանում եր՝ ավագի անագին քանակություն-  
ներ: Ողջ լիքն եր մանը ավագի փոշիսվ, վորից լերկնքի  
սովորական դույնը բոլորովին փոխվել եր:

Նա թվում եր նարնջագուլն: Յերբեմն ծիրանաղույն  
բծի նման լերեւում եր արևը:

Առաջինը Շարապը վալը ընկավ: Եիկացած ավագը  
բոցի նման ալլում եր կաշին, ծակծկում եր և քերում:

Դինդիպը մեջքը քամուն դեմ անելով խալաթը գլխին  
քաշելով ստրափած սպասում եր, թե արդիոք Շարապը  
վեր չի կենա: Բայց Շարապը ձայն չեր հանում: Նրա  
քթածակերից բալի հատիկների նման լերկու կաթիլ ար-  
լուն ցալուց:

Յերկինքը գլխին պառւլա լեկավ:

Ուժասպառ լեղած Դինդիպը փորձեց Շարապի լե-  
րեսը գլխարկավ ծածկել: Բամեն վալիկենապես խլեց ալն:  
Դինդիպը փորձեց Շարապին իր մարմնով ծածկեր: Ալդ  
ժամանակ նա գրեթե անզգա վիճակում եր: Դեռ մի վո-  
րոշ ժամանակ նա լսում եր ավագի խշոցը բայց շու-  
տավ գիտակցությունը կորցրեց:

Դինդիպն ուշքի լեկավ Շարապի ձայնից Ուշքի գա-  
լով նա տեսավ, վոր ինքը բավական հեռու լե ընկել  
Շարապից վորին բռնել պահում ելին չտեսնված խալաթ-  
ներ հագած մարդիկ: Նա թպրառում եր նրանց ձեռքե-  
րում, բղավում, վոր իրեն բաց թողնեն, չծեծեն գոտի-  
ով: Մի մոնղու նույնովիսի զարմանալի հագուստով:

կուացել եր Դինդիպի վրա ու ջուր եր ցանում նրա լեռ  
բեսին, Գոռաց և Դինդիպը:

Բայց շուտով պարզվեց, թե նրանք ում են պար-  
տական իրենց փրկությամբ:

Փռատին ուղեկցող ջոկատը հանդիպել եր ավագով  
կիսաթաղ տղաներին:

Փոթորկից հետո ոգը խաղաղ եր  
Սամումն անցել եր:

Քարավանի ուղաւերն ավազների մեջ մարդկանց հոտն  
առան և նրանց արդ անհանգստությունը ժողովրդա-  
կան բանակալիններին բերեց դեպի ավագով ծածկված  
տղաները:

### ՈՒՂԱԿԱՆ-ԲԱՏՈՐ ՔԱՂԱՔԸ

Զոկատը գնում եր քաղաք—Ուղան—Բատոր Ցղաներն  
անցել ելին մոտ 70 կիլոմետր Մինչև քաղաք մոտած  
եր գեռ 100-ից ավելի կիլոմետր Սակալին ալֆմ դանձան  
եր մի բախտավոր զրոսանքի Յեթե շիներ Շարապի  
հիվանդությունը Դինդիպը ցնծության մեջ կլիներ:

Նա բանակալինների հետ եր գնում Հիտանում եր և  
հարգանքով դիտում զինվորներին, ճիշտ այնպես, ինչպես  
հովտում, խարուիլի մոտ, դիտում եր Ուղուլին Խումբը  
զինված եր հրացաններով: Զինվորները ուրախ, մի քէշ  
ել կոպիտ, զբազվում ելին նրանով, զցում ելին հրացանն  
ուսին, նստեցնում ուղափի վրա կամ հանացով քշում:

— Գնա՞՝, գնա, փախատական... բռնվեցի՞ր:

Յերեկոները, հանգստի ժամանակ, լերգում ելին ու  
ծիծաղում, ներկարացնելով, թե ինչպես լաման վնասում  
և փախած խուվարակներին: Նրանց կաշվե զոտիները  
հրաշալի հոտ ելին արձակում:

Ուղտերը գնում ելին առանց շտապելու: Փոշու-

ժամանակ նրանք փակում ելին քթածակեցը, իսկ տոթին թեթևակի նիշնումն

Պետը խոստացավ տղաներին անձամբ տանել Սուխե—Բատորի գպրոցը, Յեթե Շարապի հոգու չլիներ, Դինդիպի ուրախութանը չափ ու աահման չեր լինի:

Անեն ինչից յերեսում եր, վոր Ուլան—Բատորն արդեն մոտ եւ Ավելի հաճախ ելին զրուղեր հանդիպում, անապատները փոխվում ելին գաշաերի և բանջարանոցների, արտաատեղերում արածում ելին բազմաթիվ անտառներ. ճանապարհին պատահում ելին աղբակուլութեր, Դաշտում և ճանապարհի վրա պտտվում ելին ուրուրներ:

Մոնղուները քշում ելին իրենց վոչխարները, ճանապարհով շարժվում ելին ճոճուն սալերը՝ տանելով մորթիներ, վոչխարի քերթած մարմիններ, թոշուններ—կարծես ուխտազնացութուն լիներ:

Դինդիպը հուզմունքով պատրաստվում եր տեսնել մեծ քաղաքը, իր յերկը ամենամեծ քաղաքը, վոր մեծ եր Ուլլա-Սուտալից, Շաքիից և Կորդոլից:

Նա դնում եր Շարապի կողքով, վորին կապել ելին թամբին և տուում.

— Շուտով կհասնենք, Շարապ, արդեն շները թափառում են ալսուելու Ինչքան շներ կան, Շարապ, Դու աեսնում ես:

Շարապը լուս ու խնարհ ժպտում եր մեղավոր Ժպիտով: Իսկապես Դինդիպը յերբեք չեր տեսել շների արդողիսի բազմություն, մինչև անգամ հովտում: Նրանք գալլերի նման վոհմակներով վիտում ելին ճանապարհին կամ վազում քաղաքի ուղղութեամբ:

Ճանկարծ յետերից լովեց սարսափելի վոռնոց, փոշին բարձրացափ, Շները փախանու Ուղարեին բռնեցին. Զինվորները ոսնձերը հավաքեցին: Ահա վրա հասավ մի մեծ փալլուն սալը այդ վոռնոցի ու փոշու հեղինակը ու

արքնթաց անցավ Նըանց կողքով Նա հսկմահար արեց  
ու խլացըեց բոլորին:

— Դա ավտորուս ե,—ասաց ժողովրդական բանա-  
կալինը,—ես բռպելիս Ուշան—Բատորը կերեա:

Դինդիպն իր կյանքում տեսել եր միայն անազատի  
խղճուկ գուշները—մեկ գորշ, մեկ գեղնավուն ավազները,  
գունատ կըրաբարը, կարմրագուլն լեռները, վոր ծածկված  
ելին աղքատիկ բուսականութիւնը, մարդկանց; Վորոնք  
անապատում ընդունել ելին նույն դժուգնությունը և կար-  
ծես խունացած լինելին ալնպես, ինչպես լերընմնի վաս  
գուշներ ունեցող խալաթները

Մինչեւ անգամ գացանն իր բազմամարդ տոնախմբու-  
թյուններով չեր կարող համեմատվել այն տեսարանի  
հետ, վոր բացվում եր Դինդիպի առաջ:

Քաղաքը ճռճռում եր, բղավում և շառաչում: Ամե-  
նուրեք դեպի վեր խորացող դրոշակները, առադասաների  
նման, փողփողում ելին քամու առաջ և կարծես անեծք ու  
նզովք լինելին չար վսդիների դեմ: Մեծ ու փոքր դրո-  
շակները, վորոնց վրա գրված ելին բուշդարական դըր-  
քերից վեցըցած աեքստեր, կախված ելին ամեն մի վրա-  
